

Ի ՅԻՇԱՏԱԿԻ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՎՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՉՈՐ
ԱՐԱՐԵԱԼ Է ԿՈՐԵԱՆ ՍՐԲՈՅ ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՅ ՆՈՐԱ

7 Արդ սկիզբն արասցուք պատմելոյ զառնն զոր նախակարգ բանից նշանակեցաք, վասն որոյ եւ փոյթ արարեալ մեր պատմելոյ, Էր Մաշդոց անուն, ի Տարան գաւառէ, ի Յացեկաց գեղջէ, որդի առն երեւելոյ Վարդան կոչեցելոյ: 2 Ի մանկութենէ վարժեալ հելլենական դպրութեամբ, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Յայոց Մեծաց, կացեալ յարթունական դիւանի, լինել սպասաւոր արքայատուր հրամանիցն առ հազարապետութեամբն Յայոց աշխարհին՝ Առաւանայ ուրեմն: 3 Տեղեկացեալ աշխարհական կարգաց¹, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւ իւրով: 4 Եւ անդէն ի նմին ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց. որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւակոխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, եւ ամենայն պատրաստութեամբ զանձն յարդարեալ, հարկաւեր զիշխանացն սպասաւորութիւն:

5 Եւ յետ այսորիկ ըստ անետարանական չափոյն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ, մերկանայր յայսմիտեռ զամենայն աշխարհակիր ցանկութիւնս, եւ առեալ զխաչն պարծանաց, ելաներ զկնի ամենակեցոյց խաչելոյն: 6 Եւ հաճեալ հրամանացն պայմանի խաչակիր գունդն Քրիստոսի աշակերտացն խառներ, եւ անդէն վաղվաղակի ի միայնակեցական կրանս մտեալ, բազում եւ ազգի ազգի վշտակցութիւն ըստ Անետարանի կրէր, եւ ամենայն կրթութեամբ ամենայն իրաց հոգեւորաց զանձն տուեալ՝ միայնաւորութեան, լեռնակեցութեան, քաղցի, ե՛ւ ծարաւոյ, ե՛ւ բանջարաճաշակ լինելոյ, արգելանաց անլուսից, խարազնազգեսս եւ գետնատարած անկողնոյ: 7 Եւ բազում անգամ զհեշտական հանգիստ զիշերացն եւ զհարկ քնոյ յոտնաւոր տքնութեամբ ի թաւթափել ական վճարելով: 8 Եւ զայս ամենայն առներ ոչ սակաւ ժամանակս: 9 Եւ գտեալ եւս զոմանս՝ յինքն յարուցաներ՝ աշակերտել նմին անետարանական սպասաւորութեանն:

10 Եւ այնպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ եւ նովին լուսաւորեալ եւ պայծառացեալ, ծանաւթական եւ հաճոյական լինէր առաջի Աստուծոյ եւ մարդկան:

11 Առեալ այնուհետեւ երանելւոյն զհաւանեալս իւր, դիմեալ իջաներ յանկարգ եւ յանդարման տեղիս Գողթան: 12 Արդ ընդառաջ լինէր նմայ իշ-

¹ Ձեռագրում՝ աշխարհացն կարգաւք